Ս.ՇՏԻԿԵԱՆ

Յ.ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Խոսքը վերաբերում է մեր գրականութեան դասականի տասնչորս քառեակից բաղկացած բանաստեղծութեանը, որն «Էքսպրոմտ» պայմանական վերնագրով, հրատարակուել է նրա երկերի ակադեմիական հրատարակութեան առաջին հատորում[1], «Ֆրագմենտներ եւ սեւագրութիւններ» ենթաբաժնում եւ որը յետագայում, վերահրատարակուելու բախտին չի արժանացել: Նկատի ունենալով այդ բանաստեղծութեան՝ մեր յետագայի ուսումնասիրութեան տեսակէտին կարեւորութիւնը, մէջ ենք բերում ստորեւ, կրճատելով այն քառեակները, որոնք ուղղակիօրէն չեն առընչւում բուն խնդրին:

Հայր Գարեգին, մենք երեքով,
Պոէտ, գիտուն ազգին Հայոց,
Ընտրուել ենք յանձնաժողով,
Որ մոմ առնենք, սարքենք հոգոց:

Հոգոց սարքենք հայոց ժամում,
Աղօթք անենք ըստ հայ ժամի,
Որ Տէր Աստուած իր Եդեմում
Տեղ տայ հոգուն Ալիշանի: ...

Չենք հաւատում արքայութեան,
Ինչքան լինի ցանկալի բան,
Ու էլ, ներէք, Հայր Գարեգին,
Ձեր հոգոցին ու աղօթքին: ...

Մենք ուզում ենք, որ մեր ազգի
Եկեղեցին լինի ազատ,
Կղրօնական չըլնի իսկի
Եւ տայ ամէն համ ու լազաթ:

Դուք էլ, հայր սուրբ, լինէք մեզ հետ,
Ազատամիտ, մեծահոգի,
Ու մըտածէք ինչպէս պոէտ,
Որ Ազգ-ազգից էլ չի ջոկի:

---

[1] ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ, Երկերի ժողովածու, հատ. առաջին, Երեւան, 1950, էջ 504-505:

Դէ տեսնո՞ւմ էք, ինչպէս ենք մենք
Լուրջ-լայն նայում այս մեծ գործին,
Եւ դուք, եթէ հոգոց չասենք,
Մենք կը դիմենք Էջմիածին: …

Թումանեանի բանաստեղծութեան՝ թէկուզ այս համառօտուած տարբերակի ընթերցումը սակայն, գայթակղիչ հարցերի մի ամբողջ դուռ է բացում: Ինչի՞ց ելնելով է ստեղծուել երեք հոգուց բաղկացած յանձնաժողով եւ բողոքի ի՞նչ պատրուակով են նրանք գնացել Գարեգին Յովսէփեանի մօտ: Ի՞նչ ընդհանուր կապ կայ Վենետիկում, 1901 թ. Նոյեմբերի 9 (22)ին մահացած Ղեւոնդ Ալիշանի եւ Թիֆլիսում ապրող ու գործող՝ Վրաստանի հայկական թեմի առաջնորդական տեղապահ (այն ժամանակ), ճանաչուած հայագէտ-բանասէր, կրթական-մշակութային գործիչ, Գարեգին վարդապետ Յովսէփեանի միջեւ: Ի՞նչ է նշանակում Թումանեանի՝ առաջին հայեացքից շատ տարօրինակ պահանջը, որ հայ եկեղեցին «հայկական չըլնի իսկի» երբ բոլոր դարերում ու հազարամեակներում հայկական (եւ ոչ միայն հայկական) եկեղեցին կրօնական հաստատութիւն է եղել: Ի՞նչ էր նշանակում վերջապէս, Թումանեանի սպառնալիքը, որ եթէ Գարեգին Յովսէփեանը տեղի չտայ, ապա իրենք, այսինքն յանձնաժողովը կը դիմեն Էջմիածին, այսինքն՝ Մկրտիչ Խրիմեանին եւ առհասարակ, ի՞նչ գործ ունի այստեղ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանը: Հարցադրումներն այս ձեւով կարելի է էլի շարունակել, որոնց վերաբերեալ քիչ թէ շատ բաւարար պատասխան, ընթերցողը հատորին կցուած «Կոմենտարներ եւ տեքստաբանական տարբերութիւններ» բաժնում (կազմողներ Ն. Թումանեան, Ար. Ինճիկեան, Ա. Ղանալանեան) չի գտնելու:

Հարցի բանասիրական պատմութիւնն աւելի հետաքրքրական եւ միաժամանակ աւելի կնճռոտ է դառնում, երբ քննութեան առարկայ ենք դարձնում «Էքսպրոմտ» բանաստեղծութեան հետ առընչուող հանգամանքները: Թումանեանի երկերի՝ յիշատակուած ակադեմիական հրատարակութեան առաջին հատորում, խնդրոյ առարկայ բանաստեղծութեան առթիւ տրուած ծանոթագրութեան մէջ (էջ 730), կարդում ենք. «Տպագրւում է առաջին անգամ, ձեռագրից»: Իրոք, Ե. Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի Յովհաննէս Թումանեանի անձնական ֆոնդում, պահպանւում է «Էքսպրոմտի» ինքնագիրը, որի՝ թէ՛ տիպիկ,

«թումանեանական» ձեռագիրը եւ թէ՛ մանաւանդ, ինքնագրի վերջում գտնուող «Յ.Թումանեան» ստորագրութիւնը, նրա հարազատութեան վերաբերեալ որեւէ կասկած չի յարուցում[2]: Սակայն այդ ինքնագրի ուշադիր քննութիւնը մի հետաքրքրական հանգամանք է բացայայտում: Այն դէպքում, երբ Թումանեանը սովորութիւն ունէր իր՝ անգամ «ամենավերջացրած» գործի վրայ կատարել բազմաթիւ ջնջումներ, բառերի, տողերի կամ ամբողջ հատուածների յաւելումներ ու կրճատումներ, այլեւայլ բնոյթի լեզուա-ոճական ուղղումներ եւ այլն, – ապա «Էքսպրոմտ» բանաստեղծութեան ինքնագիրը տարակոյս յարուցելու չափ մաքուր է ու անթերի: Հարց է ծագում. Յովհաննէս Թումանեանը «դաւաճանե՞լ» է իր իսկ աշխատանքային ոճին եւ «Էքսպրոմտի» բոլոր տասնչորս քառեակներն էլ գրել է՝ բացարձակապէս առանց որեւէ յաւելում ու կրճատում անելու անհրաժեշտութիւն ունենալու, թէ մեր տնօրինութեան տակ եղածը հեղինակի՝ իր իսկ ձեռքով կատարած խնամքոտ արտագրութիւնն է: Հարցին համեմատաբար բաւարար պատասխան տալուն օգնում է հետեւեալ հանգամանքը:

Մ.Մաշտոցի անուան Պետական Մատենադարանում պահպանուել է Գարեգին Յովսէփեանի անձնական սեփականութիւնը հանդիսացող՝ յիշեալ «Էքսպրոմտ» բանաստեղծութեան մի այլ օրինակը, որը բաղկացած է երկու էջերից, մեքենագիր է, եղած մէկ-երկու տառասխալների ուղղումներով[3]: Ձեռքի տակ ունենալով այդ օրինակը, Գարեգին Յովսէփեանը 1945 թ., Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս եղած ժամանակ, հրատարակութեան է յանձնել այն, որը եւ լոյս է տեսել իրենց պարբերականի՝ «Հասկ» ամսագրի թիւ 11-12ում, «Յովհաննէս Թումանեանի մի անտիպ քերթուածքը» խորագրի ներքո[4] եւ դրան նախորդող՝ մեզ համար կարեւոր հետեւեալ «Երկու խօսքով»: «Բնագիրը (նկատի ունի «Էքսպրոմտ» բանաստեղծութիւնը. Ս.Շ.), որը հանգուցեալը գրելուց յետոյ անմիջապէս մեզ էր յանձնել, երկար ժամանակ պահում էինք իբրեւ սրբութիւն, բայց մի անգամ Աշոտ Յովհաննիսեանը խնդրեց ինձ տեսնելու, որ այլեւս առիթ չեղաւ յետ

---

[2] ՉԱԳԱԹ, Յ. Թումանեանի ֆ., Բաժ. 1, թղթ. թիւ 92 («Հայր Գարեգին մենք երեքով...»): Ի դէպ նշենք, որ հատորում այս ինքնագրից կատարուած արտատպութիւնն իրականացուել է զովելի խնամքով ու բարեխղճութեամբ:

[3] Մատենադարան, Յարութիւն Աբրահամեանի ֆոնդ, թղթ. թիւ 99, վաւ. թիւ 196 («Հայր Գարեգին մենք երեքով...»):

[4] Այս հրատարակութիւնն ի դէպ, վրիպել է Յովհաննէս Թումանեանի՝ Երեւանում, 1961 թ. լոյս տեսած «Մատենագիտութիւնը» կազմողների աչքից:

ստանալու: Ներկայ ընդօրինակութիւնը մեզ համար հոգացել է հանգուցեալի Նուարդ դուստրը: Հեղինակի գործերի մէջ պահուած պատճէնը արտագրուած է մեր օրինակից յետագայում, հանգուցեալի ձեռքով»[5]:

Այս ուշագրաւ ցիտատը մեզ համար նախ՝ պարզում է, որ «Էքսպրոմտ» բանաստեղծութեան ինքնագիրը, երկար ժամանակ գտնուել է այդ բանաստեղծութեան «հերոսի» Գարեգին Յովսէփեանի մօտ, ապա այն վերցրել է սովետահայ ականաւոր պատմաբան Աշոտ Գարեգնի Յովհաննիսեանը եւ այլեւս չի վերադարձրել: Լրացնելիքն այստեղ այն է, որ Մատենադարանում գտնուող Աշոտ Յովհաննիսեանի թղթոններում այս կապակցութեամբ կատարուած մեր բոլոր պրպտումները ոչնչի չհանգեցրեցին. հնարաւոր եղաւ միայն ճշտել, որ Աշոտ Յովհաննիսեանը այդ թանկարժէք ինքնագիրը Գարեգին Յովսէփեանից վերցրել է 20-ական թուականներին: Պարզւում է, որ Գարեգին Յովսէփեանի «Էքսպրոմտի» օրինակը սոսկական մեքենագրութիւն է Աշոտ Յովհաննիսեանի մօտ եղած բնագրից, որը նրա՝ Գարեգին Յովսէփեանի համար «հոգացել է» Նուարդ Թումանեանը: Պարզւում է վերջապէս, որ Թումանեանը կորցնելով իր իսկ բանաստեղծութեան բնագիրը յետ ստանալու յոյսը, արտագրում է այն Գարեգին Յովսէփեանի մօտ գտնուող օրինակից՝ իր անձնական արխիւում այն ունենալու համար. այստեղից էլ նախ՝ ճշտւում է, որ Թումանեանի գործերում պահպանուող օրինակը նրա իսկ ձեռքով կատարուած արտագրութիւնն է, և ապա, հասկանալի է դառնում այդ օրինակի՝ այդքան զարմանալի կերպով «անջնջում» լինելու պատճառը[6]:

Բանասիրական բնոյթի այսքան ճշգրտումներից յետոյ, սակայն, վերեւում նշուած՝ իրենց պատասխանին սպասող հարցերի վրայ, աւելանում է է՛լի մեկը: Ի՞նչ գործ

---

[5] «Հասկ», 1945, թիւ 11-12, էջ 216-218:

[6] «Բազմավէպ»ում հրատարակած իր «Անզուգական երկուորեակք…» յօդուածում (1920 թ., թիւ 12), Տիգրան Նազարեանն այս առիթով նշում է, որ Գարեգին Յովսէփեանի դէմ հանդէս եկաւ նաեւ «Յովհաննէս Թումանեանը մի բողոք-ոտանաւորով, որը տպուեց «Տարազ»ում: Ինչպէս դժուար չէ կռահելը, խօսքը վերաբերում է («Էքսպրոմտին»), որը, յօդուածագրի հաւաստմամբ, հրատարակուելու բախտին է արժանացել: Եթե Տիգրան Նազարեանի այս պնդումը թիւրիմացութեան արդյունք չէ («Տարազ»ում, 1901 թ., թիւ 44, Դեկտեմբեր, Յ.Թումանեանն իրօք հրատարակել է մի բանաստեղծութիւն «Հայր Ալիշանի յիշատակին» խորագրով, բայց դա ամենեւին էլ մեզ հետաքրքրող «բողոք-ոտանաւորը» չէ, այլ Ալիշանի տարբեր բանաստեղծութիւնների տողերից հաւաքուած մի ինքնատիպ ծաղկեփունջ), ապա այդ կապակցութեամբ մեր կատարած պրպտումները որեւէ դրական արդիւնքի չհասցրեցին»:

ունէր այս ամբողջ պատմութեան մէջ պատմաբան Աշոտ Յովհաննիսեանը, եւ ինչո՞ւ էր նրան հետաքրքրել Յովի. Թումանեանի՝ յատկապէս այդ բանաստեղծութիւնը:

Եւ վերջապէս՝ հետեւեալը: «Էքսպրոմտի» թէկուզ ոչ-մասնագիտական ընթերցումը որեւէ կասկած չի թողնում, որ այն միանգամայն աւարտուած է, ամբողջացուած, ոչինչ չունի կիսատ կամ ֆրագմենտային, իսկ վերեւում բերուած փաստերն էլ վկայում են, որ նա մէկ, իսկ եթէ հաւատալու լինենք Տիգրան Նազարեանին ապա երկու անգամ պարբերական մամուլում հրատարակութեան է արժանացել: Սա նշանակում է, որ Թումանեանի «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության առաջին հատորում այն չպետք է որ զետեղուած լինէր «Ֆրագմենտնետ եւ սեւագրութիւններ» բաժնում:

Արդ՝ ի՞նչ է տեղի ունեցել 1901 թ. աշնանը Ղեւոնդ Ալիշանի մահուան կապակցութեամբ, որն ակունք էր հանդիսացել վերեւում բերված հարցերի համար, և որի բնականոն հետեւանքն էր դարձել Յովհաննէս Թումանեանի վերոյիշեալ բանաստեղծութիւնը:

* * *

Ալիշանի մահուան մասին կովկասահայ մտաւորականութեան նեղ շրջաններն իմացան յաջորդ օրը, 1901 թ. Նոյեմբերի 10ին (Ալիշանը վախճանել էր Նոյեմբերի 9-ի առաւօտեան ժ. 6ին, սրտային կարճատեւ նոպայից յետոյ), Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր Իգնատիոս Կիւրեղեանի կարճառօտ հեռագրից: Այդ նոյն բովանդակութեան հեռագրեր որոշ աննշան փոփոխումներով, Կիւրեղեանը նույն ամսի 9ի օրը ուղարկել էր նաեւ հայկական թերթերի ու ամսագրերի խմբագրութիւններին, Ալիշանի կովկասաբնակ ծանօթներին, կաթողիկոս Խրիմեանին եւ այլն: Մկրտիչ Խրիմեանին ուղարկուած հեռագրի օրինակը, ունէր հետեւեալ բովանդակութիւնը. «Խորին տրտմութեամբ յայտնում ենք Ձեր Սրբազնութեան Ղեւոնդ Ալիշանի մահը, որ պատահեց այսօր»[7]:

Մահագոյժը լայն զանգուածների սեփականութիւնը դարձաւ մէկ օր անց, 1901 թ. Նոյեմբերի 11ի կիրակի օրը, երբ Թիֆլիսի «Մշակ»ը այդ օրուայ իր համարում

---

[7] ՊԿՊԱ, Կաթողիկոսական դիւան, ցուց. թիւ 1-2, միաւ. թիւ 70, էջ 177 («Յոբելեանական գործեր»):

հրատարակեց խմբագրութեանն ուղղուած՝ Իգնատիոս Կիւրեղեանի հեռագիրը, որտեղ ծանուցւում էր. «Այսօր (ի՛մա. Նոյեմբերի 9ին. Ս.Շ.), վախճանուեց կարճ հիւանդութիւնից յետոյ, մեր պատկառելի Հայր Ղեւոնդ Ալիշանը։ Խորապէս վշտացած ենք։ Արքեպիսկոպոս Կիւրեղեան»[8]։

Հասկանալի է, որ Թիֆլիսահայ մտաւորականութիւնը անտարբեր ու անուշադիր չէր անցնելու այդպիսի մեծ կորուստի կողքով, մանաւանդ որ հանգուցեալը մէկն էր, որի անունն ու գործը երկար-բարակ բնութագրութեան կամ պերճախօս յանձնարարականների կարիք չունէր։ Ցանկանալով բարձրագոյն յարգանքը մատուցանել Ալիշանին, Տիգրան Նազարեանի նախաձեռնութեամբ և «Աղբիւր-Տարազ» ամսագրի խմբագրատանը, հրաւիրւում է առաջիկայ աշխատանքային անելիքները նախաձեռնող «մի մեծ ժողով, որին ներկայ էին առանց բացառութեան Թիֆլիսում գտնուող բոլոր գրականագէտները, մամուլի, արուեստի, բարեգործական, կուլտուր-ազգային-հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Ժողովը տեւեց մինչեւ կէս գիշեր, նախագահութեամբ ծերունազարդ բանաստեղծ Գէորգ Բարխուդարեանի»[9]։ Երկարատեւ ու աղմկալից վիճաբանութիւններից յետոյ, հենց այդտեղ ստեղծւում է յատուկ մի խորհուրդ, որին պաշտօնապէս տրւում է «Սգոյ յանձնաժողով» անունը, որը պէտք է համապատասխան միջոցառումներ մշակէր Ալիշանի յիշատակը յաւերժացնելու համար եւ որը բաղկացած է եղել հիմնականում հետեւեալ անձանցից. Տիգրան Նազարեան (նախագահ), Գէորգ Բարխուդարեան, Յովհաննէս Թումանեան, Աբգար Յովհաննիսեան եւ Ղազարոս Աղայեան։ Յանձնաժողովի աշխատանքներին «արտահաստիքային» կարգով օգնում էր Ալ. Շիրվանզադէն։

Նոյեմբերի 13ին, տեղի է ունենում «Սգոյ յանձնաժողով»ի անդրանիկ նիստը, որտեղ Ալիշանի մահը ըստ ամենայնի նշելու եւ նրա յիշատակը յաւերժացնելու համար, մշակւում է հասարակական-մշակութային բնոյթի միջոցառումների իրականացման հետեւեալ ծրագիրը։ 1) Միջնորդել Թիֆլիսի հոգեւոր թեմի առաջնորդ եւ Թիֆլիսի «Ս. Սարգիս» եկեղեցու վանահայր Գարեգին Յովսէփեանի մօտ, այդ եկեղեցում հանդիսաւոր

---

[8] «Մշակ», 1901, թիւ 252 («Հ. Ղեւոնդ Ալիշան»)։
[9] «Բազմավէպ», 1920, թիւ 12, էջ 375։

հոգեհանգիստ կատարելու: 2) Կազմակերպել գրական-գեղարուեստական երեկոյթ, նուիրուած Ղեւոնդ Ալիշանին: 3) Յանձնարարել հայ մտաւորականութեան ներկայացուցիչներին, պարբերականներում հանդէս գալու Ալիշանի կեանքն ու գործունէութիւնը բացայայտող գործերով (յօդուածներ, բանաստեղծութիւններ, յուշագրութիւններ եւ այլն): 4) Հոգեհանգստի արարողութիւնից եւ գրական-գեղարուեստական երեկոյթից ստացուած դրամական հասոյթով՝ հրատարակութեան պատրաստել Ղեւոնդ Ալիշանի գործերը (ենթադրւում էր երկու հատոր): Եւ 5) Հայ գրողների եւ գրական-մշակութային գործիչների անունից ցաւակցական հեռագիր ուղարկել Վենետիկ, Մխիթարեան Միաբանութեանը[10]:

Թէ կոնկրէտ ինչ էր անում Յովհաննէս Թումանեանը Նոյեմբերի 13ի նիստի ժամանակ, – դժուար է ասել: Այսքանը միայն գիտենք, որ նա ներկայ է եղել այդ նիստին եւ իր եռանդուն մասնակցութիւնն է բերել այնտեղ քննարկուող հարցերի կապակցութեամբ: Ինչպէս դժուար չէ նկատելը, «Սգոյ յանձնաժողով»ը միանգամայն լրջօրէն եւ գործի հանդէպ պատասխանատուութեան խորը գիտակցութեամբ էր ձեռնամուխ եղել իրեն վստահուած աշխատանքներին (յիշենք բանաստեղծութեան՝ նախավերջին քառեակի տողերը. «Դէ տեսնո՞ւմ էք, ինչպէս ենք մենք լուրջ-լայն նայում այս մեծ գործին»): Եւ եթէ նախատեսնուածը իրականացուէր այն ձեւով ու այն սահմաններում ինչպէս որ նախորոշուած էր, ապա այն անշուշտ գեղեցիկ ու յուզիչ յուշարձան կը դառնար նախ՝ Ալիշանի պատուին եւ ապա կը վկայէր, որ արեւելահայ մտաւորականութիւնն էլ, իր հերթին, իսկապէս գիտէր յարգել «Պաշտելի Նահապետին»: Սակայն աստիճանաբար զարգացող դէպքերը գործին բոլորովին այլ ընթացք տուեցին:

Նոյեմբերի 14ին յանձնաժողովին յայտնի դարձաւ մի զարմանալի եւ ըստ երեւոյթին անսպասելի նորութիւն. Գարեգին Յովսէփեանն արգիլել էր երեկոյեան ժամերգութեան ժամանակ, տուեալ շաբաթուայ ընթացքում մահացածների անունները յիշատակելիս, յիշատակել նաեւ՝ մի քանի օր առաջ մահացած Ղեւոնդ Ալիշանի անունը: Այս տարակարծութիւնները դեռ ինչպէս հարկն է չէին փարատուել, երբ յաջորդ օրը, Նոյեմբերի 15ին, յայտնի դարձաւ Գարեգին Յովսէփեանի նոր՝ աւելի զարմանալի

[10] ՊԿՊԱ, Կաթողիկոսական դիւան, ցուց. թիւ 1-2, էջ 150:

արարմունքը: Նա պաշտօնապէս տեղեկացրել էր «Սգոյ յանձնաժողով»ին, որ թոյլ չի տայ կիրակի օրը, այսինքն Նոյեմբերի 18ին, Թիֆլիսի «Ս.Սարգիս» եկեղեցում, Ալիշանի մահուան կապակցութեամբ հոգեհանգստի արարողութիւն կատարել:

Հասկանալի է, որ հարցը, Նոյեմբերի 15ից սկսած, շատ սուր բնոյթ է ընդունում, ըստ որում, եթէ տրամադիր չէր զիջելու Գարեգին Յովսէփեանը, նոյնը, առաւել եւս, տրամադրուած չէր առնելու միւս կողմը: Ալիշանի մահուան առթիւ կազմակերպուելիք հանդիսութիւնների մասին խորհրդակցելու, իսկ հիմնականում՝ Թիֆլիսի հոգեւոր թեմի առաջնորդի վերոյիշեալ տարակուսելի վարմունքը հասկանալու համար, «Սգոյ յանձնաժողով»ի նախագահն ու անդամները, նոյն օրը, այսինքն Նոյեմբերի 15ին, ունկնդրութիւն են խնդրում Գարեգին Յովսէփեանի մօտ: «Երկու կողմերի» հանդիպումը տեւել է շատ կարճ, ընթացել է ըստ երեւոյթին խիստ բուռն մթնոլորտում եւ, որ տուեալ դէպքում մեզ համար կարեւոր է՝ Թումանեանի եռանդալից «գործունէութեան» պայմաններում: Վերջինիս այն հարցին, թէ ինչ պատճառաբանութեամբ է սրբազանն արգիլել կրօնական յիշեալ արարողութիւնը, որն ի դէպ, լայնօրէն տարածուած էր հայկական եկեղեցիներում եւ գրեթէ անխտրաբար կատարւում էր բոլոր, քիչ թէ շատ նշանաւոր հանգուցեալների կապակցութեամբ, Յովսէփեանը տալիս է հետեւեալ պատասխանը: Հայկական եկեղեցին, ըստ դաւանանքի, լուսաւորչական եկեղեցի է, իսկ սա նշանակում է, որ հոգեւոր արարողութեան կարող են արժանի լինել այն մարդիկ միայն, որոնք պատկանում են լուսաւորչական հաւատին: Ալիշանն ինչպէս յայտնի է, հռովմէադաւան էր, այսինքն՝ կաթոլիկ, հետեւաբար լուսաւորչական եկեղեցում չէր կարող որեւէ բնոյթի արարողութեան արժանի լինել: Թումանեանի միւս հարցին, թէ սրբազանը անգամ յաջորդ կիրակի օրը, այսինքն՝ Նոյեմբերի 25ին, նոյնպէ՞ս մտադիր չէ հոգեհանգստի արարողութիւն կատարել հանգուցեալ Ալիշանի համար, Յովսէփեանը որոշակիօրեն պատասխանում է, որ ոչ միայն յաջորդ կիրակի օրը, այլեւ առհասարակ ու ընդհանրապէս որեւէ հոգեհանգիստ չի լինելու այն պատճառաբանութեամբ, որն ինքը քիչ առաջ արդէն ասաց[11]: Պատասխանն, ինչպէս ակնյայտ էր, «Միջնադարեան յետադիմութիւն էր հոտում» (Գ. Բարխուդարեանի արտայայտութիւնն է) եւ այսպիսի

---

[11] ՊԿՊԱ, նշ. աղբիւրը:

պատասխանն առաւել զարմանալի էր լսել Գարեգին Յովսէփեանից, որը կրթուած եկեղեցականի եւ զարգացած մտաւորականի անուն ունէր, հեղինակ էր հայագիտական մէկից աւելի աշխատութիւնների եւ, որ աւելի ուշագրաւ էր, տարիների նամակագրական կապ էր ունեցել հենց իր՝ Ղեւոնդ Ալիշանի հետ: Եւ այնուամենայնիւ՝ ցաւալի իրականութիւնը մնում էր փաստ: Յովսէփեանը յամառօրեն շարունակում էր պնդել իր ասածը (յիշենք հինգերորդ քառեակի տողերը. «Դուք էլ հայր սուրբ, լինէք մեզ հետ ազատամիտ, մեծահոգի, ու մտածէք ինչպէս պոէտ» այսինքն՝ իր, Յովհաննէս Թումանեանի նման) իրենց հերթին տեղի չէին տալիս նաեւ «Սգոյ յանձնաժողով»ի անդամները, եւ հենց այդտեղ էլ, որոշւում է Ալիշանի մահուան կապակցութեամբ նախորոշուած հանդիսութիւնների եւ առաջին հերթին սոյն՝ «Հոգեհանգստի հարցը» դարձնել լայն ու բազմակողմանի քննութեան առարկայ:

Ինչպէս տեսնում ենք, հարցն առաւել քան սրւում է, բանավէճը դուրս է գալիս իր սկզբնական, համեմատաբար նեղ-կրօնական սահմաններից եւ արդէն դառնում է առաջադիմականների ու պահպանողականների պայքարի առարկան: Այս կապակցութեամբ առաջին քայլն անում է Թիֆլիսի «Մշակ»ը: Թերթի անմիջապէս յաջորդ օրուայ՝ Նոյեմբերի 16ի համարը հրատարակւում է «Վերադարձ դէպի միջին դարեր» բնութագրիչ վերնագիրը կրող ընդարձակ անստորագիր առաջնորդողով, որը մի անողոք ու կրքոտ մերկացումն է այն ուղղութեան, որի ձայնափողն էր Յովսէփեանը: «Ամառս, – կարդում ենք առաջնորդողում, - երբ տօնւում էր Մխիթարեան Միաբանութեան երկուհարիւրամեայ յոբելեանը, Բագուի հայոց եկեղեցում, Եղիշէ վարդապետ Մուրադեան, հանդիսաւոր հոգահանգիստ կատարեց Մխիթար Սեբաստացու համար: Այս առիթով ահագին աղմուկ բարձրացրեցին Հայաստանեայց ցիլինդրաւոր տիրացուները: Մխիթարը կաթոլիկ է, ասում էին միջին դարերի այդ զաւակները, ուրեմն եւ նրա անունը չպիտի յիշուի մեր եկեղեցում»:

Նշելով, որ այդ նոյն «պատուհին» այժմ արժանանում է հայ ժողովրդի ազգային սրբութիւնը՝ Ղեւոնդ Ալիշանը, եւ որ այդ առնում է Գարեգին Յովսէփեանի պէս Գերմանիայում ուսում առած հոգեւորականը, հանգամանօրէն բացայայտւում է այդ քաղաքականութեան վտանգաւորութիւնը հենց իր՝ հայ ժողովրդի համար: Առաջնորդողն

աւարտւում է այսպիսի ընդհանրացումով. «Տարիներից ի վեր մենք տեսնում ենք, որ հայ Եկեղեցին զլորւում է կղերականութեան զիրկը եւ մի քանի անշնորհք, եզուիտամիտ անհատների շնորհիւ կորցնում է իր լայն, համակրելի, նուիրական յատկութիւնները: ... Սա մի կոշմար է, որը գալիս է մեզ խեղդել փորձելու»:

Իհարկէ, չէին լռում եւ հակառակ հոսանքի ներկայացուցիչները: Վերջիններս շատ շուտ կարողացան գտնել իրենց տրամադրութիւնները ու մտայնութիւնը արտայայտող լրագիրը, յանձինս Ս.Սպանդարեանի «Նոր-Դար»ի եւ ոչ պակաս եռանդով սկսեցին հանդէս գալ ի պաշտպանութիւն Գարեգին Յովսէփեանի եւ նրա որդեգրած ուղղութեան: Վստահօրէն կարելի է ասել, որ թերեւս ոչ մի հարցում, հասարակական-քաղաքական եւ ոչ մի խնդրի կապակցութեամբ, այնպէս պարզորոշ չի դրսեւորուել հայկական իրականութեան մէջ առկայ երկու հոսանքների էութիւնը եւ հետեւաբար, նրանց ներքին բովանդակութիւնը, ինչպէս այդ եղաւ սոյն հարցի կապակցութեամբ: Ահա թէ ինչպիսի պատասխան յօդուած հրատարակեց «Նոր-Դար»ը մէկ օր յետոյ, Նոյեմբերի 17ին: «Մտքերի շփոթութիւն» վերնագրուած յօդուածի սկզբում ազդարարելով, որ կաթոլիկ հաւատը մերժում է ազգութեան գաղափարը, իսկ քանի որ Մխիթարեանները «խօսքով ու գործով ջերմեռանդ կաթոլիկ են», ուրեմն նրանց մօտ չի կարող հայկական-ազգային որեւէ տարր լինել, յօդուածի հեղինակը (Ա. Ագապեան), յաւելում է. «Լսեցինք Ղեւոնդ Ալիշանի մահուան ցաւալի լուրը: Եկէք պատուենք այդ մարդու յիշատակը, բայց պատիւ տանք այնքան, որքան նա տուել է մեր ազգին. արտասուք թափենք նրա համար, բայց այնքան, որքան նա է թափել մեր ազգի համար: Եկեք առաջնորդուենք զուտ մեր ազգի օգուտով եւ ոչ թէ անորոշ ներշնչումներով: Ղեւոնդ Ալիշանը նշանաւոր անձն է, բայց ամբողջովին մեզ չի պատկանում»:

Այս տեսանկիւնից եւ այս մօտեցմամբ էլ «մշակւում է» Ալիշանի կատարած գործը, ապա քննութեան նիւթ է դառնում Մխիթարեանների ստեղծած գրական-գիտական ժառանգութիւնը, որը ոչ աւել եւ ոչ պակաս, որակւում է որպէս «յետին մտքեր ունեցող գրականութիւն»: Եւ «Նոր Դար»ը, նախանձելի հետեւողականութեամբ այդ դիրքերի վրայ մնաց յետագայում էլ: Ահա մի հատուած, մի քանի համար յետոյ այնտեղ հրատարակուած մի ուրիշ՝ «Քրոնիկոն» յօդուածից, որտեղ հեղինակը անդրադառնալով

Գարեգին Յովսէփեանի գործունէութեանը, յաւելում է. «Թբիլիսիի հայոց կոնսիստորիայի նախանդամ Հայր Գարեգին վարդապետը չէ թոյլ տալիս հայոց եկեղեցում կատարել այլադաւան Ալիշանի հոգեհանգստի կարգը: Եթէ այդ մասին մեր ստացած տեղեկութիւնները ճիշտ է, նշանակում է, որ Հայր Գարեգինը մէկն է հայոց եկեղեցու այն պաշտօնեաներից, որոնք միայն անունով չեն հոգեւորական, այլեւ կոչումով: Հայր Գարեգինն այդ դէպքում իր պարտաւորութիւնն է կատարում»[12]:

Այսպիսի լարուած իրադարձութեան պայմաններում էր ահա, որ Նոյեմբերի 17ին, Թիֆլիսում, Գէորգ Բարխուդարեանի նախագահութեամբ, տեղի է ունենում թիֆլիսահայ գրական-մշակութային գործիչների ընդլայնուած ժողովը, Ալիշանի մահուան առիթով նախորոշուած հանդիսութիւնների եւ առաջին հերթին, չարաբաստիկ «հոգեհանգիստի» հարցը քննարկելու համար: Ցաւոք, ժողովի հետ կապուած մանրամասնութիւնները յայտնի չեն: Յայտնի է միայն, որ երկու կողմերն էլ շարունակել են պնդել իրենց տեսակէտի վրայ, բանավէճը սրուել է եւ ի վերջոյ, որոշուել է հարցը հասցնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանին՝ Հայրիկին ի վերջնական լուծումն: Եւ այսպիսով, հասկանալի է դառնում Թումանեանի՝ վերեւում բերուած բանաստեղծութեան նաեւ մի «Եւ դուք, եթէ հոգոց չասէք, մենք կը դիմենք Էջմիածին» արտայայտութիւնը:

Հարցի այսպիսի սրումն ու բարդացումը, իհարկե, շատ էլ չէր կարող հաճելի լինել պահպանողական թեւի ներկայացուցիչներին: Այս բանը, ի թիւս այլոց, շատ լաւ հասկանում էր եւ Գարեգին Յովսէփեանը: Ինչքան էլ վերջինս հաւատացած լինէր իր իրաւացիութեան մէջ, այնուամենայնիւ չէր կարող չնկատել, որ փաստօրէն իր դէմ էր հանել թիֆլիսահայ (եւ ոչ միայն թիֆլիսահայ) մնաւորականութեան գրեթէ բոլոր նշանաւոր ներկայացուցիչներին: Եւ, որ կարեւոր էր, Կաթողիկոս Խրիմեանի դիրքաւորումն այս հարցում, գրեթէ երկընտրանքի տեղիք չէր տալիս այն իմաստով, որ նա, յամենայն դէպս, հազիւ թէ պաշտպանէր Յովսէփեանին կամ նրա կողմնակիցներին: Իսկ դա էլ, հայկական հասարակական գործիչների ու մտաւորականների աչքում, մեղմ ասած, հեղինակազուրկ կ'անէր Գերմանիայում իր ուսումն առած, փիլիսոփայութեան դոկտոր (1897 թ.), վարդապետին, այն էլ նրա եկեղեցական-հասարակական

[12] «Նոր Դար», 1901, թիւ 171 («Քրոնիկոն»):

գործունէութեան արշալոյսին։ Այս ամէնը հանգամանօրէն կշռելուց ու քննելուց յետոյ, Յովսէփեանը որոշում է նախայարձակ լինել։ Նախ՝ Նոյեմբերի 15ին, Էջմիածին ուղարկած իր հեռագրով, նա տեղեկացնում է Մկրտիչ Խրիմեանին Ալիշանի մահուան առթիւ հոգեհանգիստ կատարելու մտադրութեան եւ իր կողմից այն արգիլելու մասին, եւ ապա, Նոյեմբերի 19ին, ընդարձակ նամակ-բացատրական է գրում կաթողիկոսին եւ հանգամանօրէն շարադրում է իր նկատառումները յիշեալ հարցերի առթիւ։

Նամակ-բացատրականն սկսւում է լայն դիւանագիտական նախապատրաստութեամբ. «Հոգեւոր տէր, – գրում է Յովսէփեանը, - հեռագրով, որպէս տեղեկութիւն յայտնել էի Ձերդ Սրբութեան, որ մի քանի պարոններ դիմել էին ինձ եւ իրաւունք էին խնդրում հանգուցեալ Ալիշանի յիշատակին հոգեհանգիստ կատարելու, բայց հրաժարուել էի անմիջապէս նոցա ցանկութիւնը կատարելուց, անպատշաճ համարելով այդ։ Ես փորձել էի մի առ մի բացատրել նրանց, թէ ինչու պատշաճաւոր չեմ համարում հայ գրական-գիտնական, բայց այլադաւան գործչին մեր եկեղեցու մէջ հոգեհանգիստ կատարել եւ յորդորել էի դրա փոխարէն ներկայ լինել ինձ հետ հայ-հռովմէական եկեղեցում կատարուելիք հոգեհանգստեան»։

Շարունակելով այսպիսի ձեւով եւ այսպիսի զգուշաւորութեամբ, Յովսէփեանը սակայն, քիչ յետոյ «յարձակման է անցնում»։ «Սակայն վերջին տարիներս, ինչպէս ուրիշ խնդիրներում, այնպէս էլ հոգեհանգիստ կատարելու հարցում, գաղափարների շփոթութեամբն ամէն ինչ տակն ու վրայ է դարձել։ Հոգեհանգիստը, որ զուտ կրօնական մի արարողութիւն է, դարձել է կուսակցական ցոյցերի ու պայքարների ասպարէզ»։

Նամակ-բացատրականի վերջում Յովսէփեանն արդէն այնքան հեռու է գնում, որ կաթողիկոսին կողմնորոշելու «բարի» դիտաւորութիւնից ելնելով, սկսում է... սովորեցնել նրան, թէ որն է լինելու նրա դիրքը։ «Նուաստութեանս կարծիքն այն է, – գրում է նա, – որ պէտք է հրաման տալ, որպէսզի մի անգամից վերանան այն տգեղ սովորութիւններն ու նորամուծութիւնները, որով եկեղեցական սրբազան արարողութիւնները թեթեւամիտ եւ ոչ մի նշանակութիւն չունեցող ցոյցերի ասպարէզ են դառնում»[13]։

---

[13] ՊԿՊԱ, Կաթողիկոսական դիւան, ցուց. թիւ 1-2, միաւ. թիւ 70, էջ 152-159։ Տե՛ս նաեւ մեր հրապարակումը. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, թիւ 1, էջ 173-181 («Ալիշանի մահուան արձագանքները փաստաթղթերում»)։

Դժուար է մատնանշել մի այլ փաստաթուղթ, որը կարողանար այսպիսի յստակութեամբ ու հետեւողականութեամբ բացայայտել Գարեգին Յովսէփեանի ամբողջ էութիւնը։ Իսկ այս էլ իր հերթին, գալիս էր ապացուցելու, որ նրա նման նշանաւոր հայագէտը, պատմա-բանասիրական մէկից աւելի ծանրակշիռ աշխատութիւնների հեղինակը, հայ պատմիչների գործերի գիտակ գնահատողն ու ուսումնասիրողը, հասարակական-ազգային յարաբերութիւնների ինչ-որ մի շրջադարձային կէտում, չկարողացաւ պահպանել իր հաւասարակշռութիւնը։

Իսկ Նոյեմբերի 19ի օրը դեռ չէր վերջացել...

Անգործ ու անաշխատանք նստած չէր նաեւ «Սգոյ յանձնաժողով»ը եւ մանաւանդ նրա ամենաանդադար անդամը։ Նոյեմբերի 17ին տեղի ունեցած ժողովի աննպաստ ելքից վրդովուած, հայկական պարբերականների՝ ամենազանազան բնութագրականներով քննութեան առարկայ դարձած, «հոգահանգստի հարցից» զայրացած, Յովհաննէս Թումանեանը, Շիրվանզադէի եւ թիֆլիսցի իրաւաբան-գրասէր, գրական գործիչ Գէորգ Մելիք-Ղարագեօզեանի հետ միասին, ընդունելութիւն է խնդրում Գարեգին Յովսէփեանի մօտ, յուսալով ընտանեկան պայմաններում համոզել նրան։ Առաջին հայեացքից՝ դա պէտք է որ հնարաւոր լինէր, որովհետեւ երեքն էլ ի մօտոյ գիտէին Գարեգին Յովսէփեանին, տարբեր առիթներով առընչուել էին նրա հետ։ Նոյն Նոյեմբերի 19ին, Գարեգին Յովսէփեանի տանը կայանում է «երկու կողմերի» հանդիպումը։ Սկսում է Հայր Սուրբը եւ՝ բաւականին հեռուից։ Նա տեղեկացնում է, որ ոչ Եւրոպայում եւ ոչ էլ Ռուսաստանում, ո՛չ կաթոլիկ, ո՛չ բողոքական եւ ո՛չ էլ պրավոսլաւ եկեղեցուն պատկանող հաւատացեալները, իրենց չեն կարող թոյլ տալ, որ որեւէ օտարադաւան հանգուցեալի յիշատակը յարգելու համար, իրենց հավատի արտայայտիչը հանդիսացող եկեղեցում հոգեհանգիստ կատարուի։ Նման դէպքերում նրանք, իրենց առաջնորդի հետ միասին, կամ ներկայ են լինում տուեալ օտարադաւանի եկեղեցում կատարուող հոգեհանգստի արարողութեանը եւ կամ էլ, մասնակցում են նրա յուղարկաւորութեան հանդէսին։ Արդ՝ Ալիշանը, – շարունակում է Յովսէփեանը, – բոլորիս համար պաշտելի է, նրա գործերի վրայ ամբողջ սերունդներ են դաստիարակուել, բայց նոյն այդ Ալիշանը ոչ միայն հակառակ էր հայկական եկեղեցուն, այլեւ իր աշխատութիւններում

հետեւողականօրէն զարգացնում էր այն տեսութիւնը, որ հայ ժողովրդի ազատագրութեան ու փրկութեան միակ ճիշտ ուղին «վեհագոյն գահին Հռովմայ» ենթարկուելն է, եւ եթէ այսօր այդ այդպէս չէ, ուրեմն հերձուածող է եւ դատապարտութեան արժանի: Իսկ քանի որ հոգեհանգիստը զուտ կրօնական արարողութիւն է եւ ոչ թէ գիտնականին կամ բանաստեղծին յարգանք մատուցելու միջոց, ապա ինքը՝ Գարեգին Յովսէփեանը չի կարող նման տիպի որեւէ արարողութիւն կատարել:

Ինչպէս դժուար չէ նկատելը, Գարեգին Յովսէփեանը չի կարողացել բերել եւ ոչ մի նոր փաստարկ, կամ իր ասածը համոզիչ դարձնելու համար գէթ մէկ հատիկ թարմ կռուան: Այս էլ յամբերութիւնից հանել է յանձնաժողովի անդամներին, որոնք սկսել են, – եւ բաւականին սուր արտայայտութիւններով, – մեղադրել իրենց «հակառակորդին» պահպանողականութեան եւ ազգային խնդիրները սխալ հասկանալու մէջ: Դրան ի պատասխան, Յովսէփեանը թոյլ է տալիս առաջին դիւանագիտական սխալը: Նա յայտնում է, որ ինքը մի քանի օր առաջ, հեռագրով, արդէն տեղեկացրել է Կաթողիկոսին ծրագրուելիք հոգեհանգստի եւ այն իր կողմից արգիլելու մասին եւ հետեւաբար հակառակը անել չի կարող: Այս յայտարարութիւնը սոսկ իւղ է լցնում կրակի վրայ, վէճերը ծայր են առնում նոր ուժով: Մեզ հասել է Յովհաննէս Թումանեանի մի կրքոտ ռեպլիկը, որը բաւարար յստակութեամբ բացայայտում է բանավէճի ամբողջ սրութիւնը. «Հայր սուրբ, եկեղեցին դարձրել ես կրօնական դուքան» (յիշենք բերուած բանաստեղծութեան հետեւեալ տողերը. «Մենք ուզում ենք ... եկեղեցին լինի ազատ, կրրօնական չըլնի իսկի») որին Գարեգին Յովսէփեանը ոչ պակաս սրութեամբ պատասխանել է, թէ քանի որ նա՝ Թումանեանը, բանաստեղծ է, ապա լաւ կանի, որ զբաղուի իրեն վերաբերուող գործերով: Քիչ աւել կամ քիչ պակաս ձեւով, իրենց անսքող տրտունջներն են յայտնում նաեւ Շիրվանզադէն ու Գէորգ Մելիք-Ղարագեօզեանը: Եւ հաւանօրէն ցանկանալով վերջնական հարուած հասցնել իր ընդդիմախօսներին, Գարեգին Յովսէփեանը թոյլ է տալիս երկրորդ դիւանագիտական սխալը: Նա տեղեկացնում է ներկաներին, որ ինքը, հեռագրից բացի, առանձին մի նամակ էլ է գրել Մկրտիչ Կաթողիկոս Խրիմեանին եւ հանգամանօրէն շարադրելով տեղի ունեցած բոլոր

անցուդարձերը, չի թաքցրել իր բացասական վերաբերմունքը եւ աներկմիտ խորհուրդ է տուել Կաթողիկոսին, նոյնը անել նաեւ հայրապետական մակարդակի հրաման-կարգադրութեամբ[14]: Համապատասխան անդրադարձը պատկերացնելը արդէն մեծ երեւակայութեան հետ չի կապւում: Նախորդ օրերի դէպքերն ընդհանրապէս, իսկ այս՝ Նոյեմբերի 19ի «բարձր կողմերի» հանդիպումն ու ծաւալուած վիճաբանութիւնը յատկապէս, արդէն լիուլի «լիցքաւորում» են Թումանեանին: Հենց այդտեղ, նա թուղթ ու թանաք է խնդրում տանտիրոջից եւ մի կողմ քաշուելով, ընդհանուր աղմուկի՝ ու յախուռն խօսքափոխանակութեան պայմաններում, գրում է իր անվերնագիր եւ «Հայր Գարեգին» բառերով սկսուող բանաստեղծութիւնը, որն աւարտելուց յետոյ, կարդում է ներկաներին: Բանաստեղծութիւնը ջերմ հիացմունքի ու դրուատանքի է արժանանում, առանձնապէս ուրախ ու գոհ է եղել նրա «հերոսը»՝ Գարեգին Յովսէփեանը, որը եւ՝ հասկանալի տրամաբանութեամբ, Թումանեանի ձեռքից անյապաղ վերցրել է այն եւ պահել իր մօտ[15], որտեղ էլ մնացել է անտիպ շուրջ 40 տարի, ընդհուպ մինչեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պարբերականում՝ «Հասկ» ամսագրում հրատարակուելը[16]:

Եւ դեռ պէտք է տարիներ անցնէին, Թումանեանի բանաստեղծութիւնը դեռ պէտք է հանգիստ «ննջէր» նրա օրինական «տիրոջ» զզրոցում, մինչեւ որ նրա նկատմամբ չթաքցուած հետաքրքրութիւն սկսէր ցուցաբերել Աշոտ Յովհաննիսեանը: Նոր-նոր էր, որ նա վերադարձել էր Հայաստան, ապա եւ՝ 1922 թուականին ստանձնել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի (այն ժամանակ՝ Գլխաւոր քարտուղար)

---

[14] ՊԿՊԱ, նշ. աղբիւրը:

[15] Այս փաստը մի անգամ եւս գալիս է ապացուցելու, որ Տիգրան Նազարեանի պնդումը Յովի. Թումանեանի «բողոք-ոտանաւորի մասին», որն իբր հրատարակուել է «Տարազ»ում, չի համապատասխանում իրականութեանը (տե՛ս թիւ 6 ծանօթագրութիւնը): Գարեգին Յովսէփեանը չէր կարող այնքան անհեռատես լինել, որ հրատարակութեան յանձնէր մի բանաստեղծութիւն, որտեղ ինքը ներկայացուած էր բաւականին երգիծաբան ու ծաղրալի պիտակաւորումներով, իսկ Թումանեանն էլ, իր բանաստեղծութեան բնագիրը, ինչպէս արդէն ցոյց տուեցինք, ձեռքի տակ չունէր:

[16] Բանաստեղծութեան գրութեան թուականը «Հասկ»ում նշուած է 1901 թ. Նոյեմբերի 23, որն անկասկած, թիւրիմացութեան արդիւնք է: Եթէ անգամ նկատի չունենանք վերեւում շարադրուած փաստերը՝ Թումանեանը «Հայր Գարեգին»ում նախազգուշացնում է, որ եթէ Գարեգին Յովսէփեանն իրենց խնդրանքին դրական պատասխան չտայ, ապա «մենք կը դիմենք Էջմիածին»: Թումանեանն այսպէս չէր կարող գրել Նոյեմբերի 23ին, որովհետեւ նրանք դեռ հինգ օր առաջ, այսինքն՝ Նոյեմբերի 17ին, արդէն դիմել էին Էջմիածին: Յիշատակուած՝ Նոյեմբերի 23ին՝ ստացուել էր Մկրտիչ Կաթողիկոս Խրիմեանի հեռագիրը, որով նա տեղեկացնում էր Գարեգին Յովսէփեանին, որ Ալիշանի յոբելեանն արգիլելու վերաբերեալ որեւէ կարգադրութիւն ինքը չի անելու, քանի որ «Ալիշանին մահը անմահութիւն է»:
Այս թուականն է ահա, որ նշել է Գարեգին Յովսէփեանը:

պարտականութիւնները, եւ, որ ընդգծելի է՝ վերադարձել էր որպէս մարքսիստական-պլեխանովեան գաղափարաբանութիւնը ըստ ամենայնի իւրացրած, այդ ոճով ու ոգով հիմնաւորապէս դաստիարակուած մի գործիչ: Հայ դասականներին անդրադառնալու, նրանց ստեղծագործութիւնը այդ նոր աշխարհայեացքի տեսանկիւնից քննելու ու ներկայացնելու Յովհաննիսեանի միտումը հին պատմութիւն ունէր[17]: Թումանեանն էլ շուտով դարձաւ գիտնականի հետաքրքրասիրութեան «առարկաներից» մէկը եւ մեր դասականի վերաբերեալ հնարաւորին չափ շատ նիւթ ամբարելու, պարզ տրամաբանութեան թելադրութեամբ, Յովհաննիսեանը շուտով «դուրս է գալիս» վերոյիշեալ «Հայր Գարեգինի» հետքի վրայ: Գիտնականի հետաքրքրութիւնը յատկապէս այդ գործի նկատմամբ թէ՛ հասկանալի է եւ թէ՛ պատճառաբանուած թէկուզ այն պատճառով, որ բանաստեղծութիւնը կարող է օգտաշատ նիւթ տալ Թումանեանի գործունէութեան ու ստեղծագործութեան՝ թէկուզ այդ ժամանակահատուածը մարքսիստական աշխարհայեացքի տեսանկիւնից ներկայացնելու համար: Մտադրուե՞լ է արդեօք այդ անել անուանի գիտնականը եւ եթէ այո՝ ապա ի՞նչ ընդգրկմամբ եւ ի՞նչպէս, – ասել չենք կարող, որովհետեւ այդ բնոյթի ոչինչ չունենք ձեռքի տակ: Հաւանական է, որ նա այդ չի արել, քանզի Կոմկուսի Կենտկոմի Գլխաւոր քարտուղարի բազմազբաղ պաշտօնը, որը նա վարեց մինչեւ 1927 թուականը, ապա երկարաժամկէտ մեկնումը Մոսկուա եւ Լենինգրադ, այդ անելու հնարաւորութիւնը բացառում էր: Մեզ հասել է միայն մի յօդուած-դիմանկար «Յովհաննէս Թումանեան» վերնագրով, տպագրուած «Նորք» հանդէսի 1923 թ. թիւ 2ում, եւ նոնյութեամբ արտատպուած նրա «Յուշեր եւ բնութագրումներ» ժողովածուում[18], սակայն այնտեղ, մեզ հետաքրքրող հարցի վերաբերեալ ոչինչ չկայ ասուած:

Բազմավէպ, 1990, № 3-4

[17] Տե՛ս ԱՇ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Յուշեր եւ բնութագրումներ, Երեւան, 1969, 129 էջ:
[18] ԱՇ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, նշ. ժողովածուն, Երեւան, 1969, էջ 99-104: